ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017Թ.
№ 33(451)
www.syuniacyerkir.am

...Անտանելի է տեսնել Ոչնչությունը նանիր, որ ոտերեանոով է զուգվել:

ՇԵՔՍՊԻՐ

ՆԱՐԵԿ ՕՐԴՅԱՆ. Սյունյաց աշխարհի մերօրյա քանդակագործը

«Արվեստագետը շատ չպիտի խոսի, նրա մասին պիտի խոսեն իր գործերը», - այս հաստատ համոզմունքն ունի քանդակագործ Նարեկ Օրդյանը: Չնայած երիտասարդ տարիքին՝ հասցրել է մնայուն գործեր ստեղծել: Բայց նրան ճանաչում բերեց հատկապես Սուրբ Գրիգոր Տաթեւացու հուշակոթողը, որ տեղադրված է Գորիսի կենտրոնական հրապարակում:

Նարեկ Օրդյանը ծնվել է 1986 թվականին, ավարտել է Վերիշենի միջնակարգ դպրոցը, արվեստի դպրոց չի հաճախել, հայրն է եղել (քանդակագործ-գեղանկարիչ Գագիկ Օրդյան) մասնագիտության առաջին ուսուցիչը: Քանդակելու սերը նրան Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիա է տարել, որի քանդակի բաժինն ավարտել է 2009 թվականին: Ուսանողական տարիներին ամուսնացել է, այժմ երեք որդի ունի, դեռ վաղ է խոսել, թե նրանցից ով կգնա իր հետքերով, բայց անտարբեր չեն հոր մասնագիտության հանդեպ: Այնուամենայնիվ, Գորիսում ունի հետեւորդներ՝ Գորիսի Հենրիկ Իգիթյանի անվան գեղարվեստի ազգային կենտրոնի սաներ, ովքեր ուսումը պիտի շարունակեն Երեւանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի քանդակի բաժնում: Ինքն էլ ժամանակին կարեւորեց պրոֆեսիոնալ ուսում ստանալը (խոսքը բարձրագույն կրթության մասին է):

Առաջին մոնումենտալ գործը Տաթեւացու

էջ 7

Կապանի օդանավակայանը 25 տարով անհատույց հանձնվել է կոնցեսիոն կառավարման

Օգոստոսի 23-ին Կապանի ավագանին 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով (ավագանին ունի 15 անդամ) հավանության է արժանացրել համայնքի ղեկավար Աշոտ Հայրապետյանի առաջարկությունն ու լիազորել վերջինիս Կապանի օդանավակայանը 25 տարով կոնցեսիոն կառավարման հանձնելու պայմանագիր կնքել ««Սյունիք» օդանավակայան» ՍՊԸ-ի հետ: Այս ընկերությանը դեռ կանդրադառնանք:

Մինչ այդ նշենք, որ սեպտեմբերի 8-ին Հայրապետյանի լիազորված անձը՝ փոխքաղաքապետ Արգամ Գրիգորյանը, կոնցեսիոն պայմանագիր է կնքել ՍՊԸ-ի տնօրեն Հրաչիկ Այվազյանի հետ: Այսպիսով՝ մինչեւ 2042 թվականը Սյունիքի մարզկենտրոնի օդանավակայանը կլինի ուրիշի տրամադրության տակ:

Կոնցեսիայի պայմանները

Պայմանագրով ««Սյունիք» օդանավակայան» ընկերությունը ստանձնում է կառույցի տիրապետման, օգտագործման, կառավարման, շահագործման, սպասարկման, վերանորոգման եւ անհրաժեշտ բարելավման իրականացման իրավունքը: Փաստաթղթում ամրագրվել է, որ դրա իրավաբանական ուժ ստանալուց հետո 2 ամսվա ընթացքում կոնցեսիոները ներկայացնելու է ներդրումային ծրագիրը, որը համայնքապետարանի կողմից հավանության արժանանալուց հետո վավերացվելու է լրացուցիչ համաձայնագրով:

Կոնցեսիոն պայմանագիրը սահմանում է,

էջ 6

Շաքե հրաշքը կա, մնում է պահպանել այն

«Հակոբջանյան եւ Գալստյան» ՍՊ ընկերությանը պատկանող հէկ-ի համասեփականատեր Աղասի Հակոբջանյանի հետ զրույցը մի շարք կարեւոր հարցեր է ընդգրկում. Շաքեի ջրվեժի գրաֆիկային գործարկումը, տարածաշրջանի առանձնահատուկ տեսարժան վայրի հանրային նշանակության գերադասումը հէկ-ի շահերից, կառուցող հայի ոդիսականը, Սֆինքսի լռությունը եւ այլն:

***

- Պարոն Հակոբջանյան, տեղյակ ենք, որ Շաքեի ջրվեժը՝ որպես հանրապետության ամենաուշագրավ տեսարժան վայրերից մեկը, այսօր նոր ռեժիմով է գործարկվում:

Ինչպիսի՞ն էր Շաքեի ջրվեժի երեկվա եւ ինչպիսի՞ն է նրա այսօրվա կարգավիճակը:

- Ի սկզբանե մենք պարտավորություն չունեինք ջրվեժի հետ կապված, իսկ հէկ-ը գործընկերոջս հետ քսան տարի առաջ գնել ենք պետությունից: Ոչ մի պարտավորություն չկա եւ չի էլ եղել, որ ջրվեժն ապահովեինք շուրջօրյա աշխատանքով: Սա՝ զուտ մեր իրավունքների տեսանկյունից, բայց որպես հայ, որպես երկարամյա պետական գործունեություն ունեցող մարդ եւ ամենակարեւորը՝ որպես սիսիանցի, սյունեցի հայ, իհարկե, միշտ էլ գնահատել եմ ջրվեժի դերակատարությունը: Այդ առումով՝ միշտ էլ ինձ համար առաջնային է եղել նրա գոյությունը եւ ոչ թե մեր անձնական շահը:

Ուղղակի մի հարց կա. մարդիկ չեն ուզում մի հարթության մեջ տեսնել ջրվեժը եւ հէկ-ը՝ մտածելով, որ վերջինս մենք գնել ենք, որպեսզի ջրվեժի գոյությունը խափանենք, որպեսզի այն դադարի ջրվեժ լինելուց: Ավելի անհեթեթ միտք, քան դա է, հնարավոր չէ պատկերացնել:

- Այսինքն, լինելով հէկ-ի բաժնետեր, Դուք կարեւորել եք Շաքեի ջրվեժի նշանակությունը, նրա գեղեցկությունն ու զուտ զբոսաշրջային դերը, նույնիսկ՝ ի վնաս ընկերության շահի՞...

- Այո, ես դեռ կանդրադառնամ այդ հարցին: Այնպես չի եղել, որ ջրվեժն անհասանելի է եղել մեր ազգաբնակչությանը, ուղղակի կանոնակարգված չի եղել նրա գործունեությունը, ազատ ռեժիմով աշխատել ենք, բայց այդ պայմաններում էլ՝ չի գտնվի մեկը, ով կվկայի, թե ինքը հասել է Շաքեի ջրվեժ եւ առանց նրա գեղեցկությունը վայելելու, տեսնելու, հետ գնացել: Գուցե եղել են բացառիկ դեպքեր, բայց չի կարելի դա ընդհանրացնել եւ մատի փաթաթան դարձնել:

Բոլոր դեպքերում, ես նույնիսկ բարձրաձայնել եմ, գործընկերոջս հետ՝ անձնական նախաձեռնությամբ, վերջին 10-15 տարիների ընթացքում դիմել ենք բոլոր վարչապետերին, տարածքային կառավարման նախարարներին, մարզպետներին՝ պետական մակարդակով խնդիրը կարգավորելու համար, եւ, ինչպես ասում են, ձայն բարբառո հանապատի:

Այն տպավորությունն էր միշտ, ասես Շաքեի ջրվեժը միայն մեզ համար էր ինչ-որ բան նշանակում:

Հարգանք ու պատիվ բնապահպանության գործող նախարար Արծվիկ Մինասյանին, ով լսելու եւ խնդիրը հասկանալու մշակույթ ունի: Տեղեկանալով մեր ընդհանուր մտահոգության մասին՝ նստեցինք կլոր սեղանի շուրջ, հրավիրվեց նախարարին կից խորհրդի նիստ՝ Շաքեի ջրվեժի հարցը հանգամանորեն քննարկելու համար:

էջ 4

ՍՊԱՐԱՊԵՏԻ ՕՐ. ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅՈՒՆ ԽՆՁՈՐԵՍԿՈՒՄ

Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Սյունիքի մարզ

Աշխատանքային այցով հոկտեմբերի 7-ին Սյունիք այցելած նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է մարզում առաջին անգամ անցկացվող Սպարապետի օրվան նվիրված միջոցառումներին:

Հանրապետության նախագահը միջոցառումների շրջանակներում այցելել է Խնձորեսկ համայնքում գտնվող Մխիթար Սպարապետի գերեզմանին, ծաղիկներ դրել եւ հարգանքի տուրք մատուցել Սպարապետի հիշատակին, իսկ երեկոյան ներկա է գտնվել օրվա խորհրդի ներքո կազմակերպված գալա համերգին:

Խնձորեսկում Սպարապետի օրվան նվիրված բազմաբնույթ միջոցառումներն ուղեկցվել են ժողովրդական տոնախմբությամբ, երգ ու պարով, ավանդական տարբեր սպորտաձեւերում մրցույթներով:

Սյունիքի մարզ կատարած այցի շրջանակներում հանրապետության նախագահն այցելել է Գորիսում գտնվող Ակսել Բակունցի տուն-թանգարան: Նախագահին ներկայացրել են, որ 2012-2014 թվականների ընթացքում թանգարանում կատարվել են հիմնանորոգման աշխատանքներ, բարեկարգվել ու նորացվել է ցուցասրահը, ամբողջովին փոխվել են շարժական ցուցադրական վահանակները, ցուցափեղկերը, ավելացվել են նոր ցուցադրանմուշներ:

Հանրապետության նախագահը Գորիսում ծանոթացել է նաեւ հիմնանորոգվող «Գորիս» հյուրանոցի պայմաններին:

president.am
7 հոկտեմբերի 2017թ.

Մխիթար Սպարապետի հերոսական կերպարի նորովի ոգեկոչումը՝ գնահատելի երեւույթ

2017թ. հոկտեմբերի 7-ի խնձորեսկյան տոնախմբությունը, առանց չափազանցության, հանրապետության մասշտաբի համաժողովրդական իրադարձություն եղավ:

Գլխավոր նպատակը մեկն էր՝ ոգեկոչել հայոց պատմության ամենահերոսական դեմքերից մեկի՝ Մխիթար Սպարապետի հիշատակը:

Մեր լեռնաշխարհի մարդկանց համար երեք դար շարունակ ոգեշնչման ու հերոսականության անսպառ աղբյուր եղավ Մխիթար Սպարապետի կերպարը, ում նորովի ոգեկոչումը՝ պետական մակարդակով, Սյունիքում գնահատանքի հավելյալ զգացում առաջացրեց Հայաստանի Հանրապետության նախագահ, Սյունյաց աշխարհի արժանավոր զավակ Սերժ Սարգսյանի հանդեպ, ում հովանու ներքո կազմակերպվեց երկար սպասված տոնակատարությունը, ով էլ իր ներկայությամբ պատվեց միջոցառումը:

18-րդ դարասկզբի հայ ազատագրական պայքարի կազմակերպիչներից մեկը՝ Մխիթար Սպարապետը, ով 1730-ին մեր իսկ հայրենակիցների ձեռքով Խնձորեսկում հրացանազարկ եղավ, ապա եւ գլխատվեց (գլուխն էլ տարան օսմանցի փաշային), երկու հարյուր տարուց ավելի ժամանակ գրեթե մոռացության էր մատնված (չհաշված պատմագիտական որոշ ուսումնասիրություններ):

Սերո Խանզադյան մեծ արձակագիրն էր, ով «Մխիթար Սպարապետ» պատմավեպով (1962թ.) խախտեց դարերի լռությունը եւ սերունդներին ներկայացրեց դավիթբեկյան հերոսամարտի անպարտելի Սպարապետին:

Պատմավեպի լույս աշխարհ գալուց հետո «Մխիթար Սպարապետ» ներկայացումը դարձավ հայաստանյան թատերախմբերի մեծ մասի խաղացանկի պարտադիր բաղկացուցիչը:

1978 թվականին Հայաստանի այդ օրերի առաջնորդ, երջանկահիշատակ Կարեն Դեմիրճյանի նախաձեռնությամբ, պատմավեպի հիմքի վրա նկարահանվեց «Հուսո աստղ» ֆիլմը (երկու մաս, ռեժիսոր՝ Էդմոնդ Քյոսայան, սցենարի հեղինակ՝ Կոնստանտին Իսաեւ), որը «Հայֆիլմ» ստուդիայի պատմության մեջ աննախադեպ մասշտաբի գործ էր, որը գեղարվեստական բացառիկ ներշնչանքով ներկայացրեց Սպարապետի կերպարը:

1980-ականներին նոր քայլ կատարվեց Մխիթար Սպարապետի հիշատակը հավերժացնելու ուղղությամբ՝ Գորիս քաղաքի կենտրոնական հրապարակը կոչվեց նրա անունով. նախաձեռնությունը կոմունիստական կուսակցության Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանինն էր:

Այդ ժամանակ փորձ արվեց հայ-ադրբեջանական սահմանագլխին հիմնադրվող գյուղը նույնպես կոչել Սպարապետի անունով՝ Մխիթարաշեն, բայց խնձորեսկցիները նախապատվությունը տվեցին Ներքին Խնձորեսկ անվանումին:

1988-ին սկիզբ առած համազգային շարժման օրերին եւ հայ-ադրբեջանական հակամարտության ընթացքում Գորիսի հերոսական ինքնապաշտպանական ջոկատներն առաջնագիծ էին մեկնում Մխիթար Սպարապետի գերեզմանի առաջ երդվելուց հետո:

2017թ. հոկտեմբերի 7-ի տոնակատարությունը հավաստեց, որ Մխիթար Սպարապետի անունն ու գործն անկախ Հայաստանի արժեհամակարգում պատշաճ տեղ են զբաղեցնում ի վերջո, իսկ նրա քարեղեն վերադարձը Գորիսի՝ իր իսկ անունը կրող հրապարակ, դառնում է անհրաժեշտություն:

«Սպարապետի օր» տոնախմբության առիթով բազմաթիվ սյունեցիների անունից երախտագիտություն ենք հայտնում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանին, ով նախաձեռնեց փայլուն այդ միջոցառման կազմակերպումը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Խնձորեսկում տոն էր

Խնձորեսկի ճոճվող կամրջի երկարությամբ կանգնած կատարողներն ավանդական զուռնա-դհոլով ազդարարեցին Սպարապետի օրվան նվիրված տոնական միջոցառումների մեկնարկը, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ էր նշվում: Վայրը պատահական չէր ընտրվել, այդտեղ է գտնվում Մխիթար Սպարապետի գերեզմանը, ով հայ ազգի նշանավոր գործիչներից է: Ինչպես փաստում է միջոցառումների կազմակերպիչ «Շարմ հոլդինգ» ընկերության գլխավոր տնօրեն Կարեն Ղազարյանը, միջոցառումը միայն Մխիթար Սպարապետի հիշատակի ոգեկոչմանը չէր նվիրված, այլ՝ հայ ազգի բոլոր սպարապետներին:

Ա.Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանի եւ Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի ուսանողները Մխիթար Սպարապետի գերեզմանի մոտ զինվորական երդում տվեցին, իսկ մինչ այդ բարձրաստիճան զինվորականները ծաղկադրում կատարեցին Սպարապետի գերեզմանին, տրվեց նաեւ զինվորական համազարկ:

Ճոճվող կամրջի տարածքում լսվում էր «Կարին» ավանդական երգի-պարի խմբի (Գագիկ Գինոսյանի ղեկավարությամբ) ելույթների խրոխտ ու ոգեւորիչ ձայնը, որ իր մոտ էր հավաքել բազում այցելուներ, ովքեր նույնպես միացել էին խմբի կատարումներին՝ անընդհատ «պահանջելով» նոր ելույթներ: Սուրբ Հռիփսիմե եկեղեցու տարածքում երգչախմբի կատարմամբ հնչեցին շարականներ, իսկ ճոճվող կամուրջ այցելողների թիվն անհամար էր: Ինչպես նշեց 2012թ. այդ կամուրջը հիմնադրած, Հին Խնձորեսկի վերածննդի նախաձեռնող, տարածքում մի շարք բարեկարգումներ իրականացրած Ժորա Ալեքսանյանը. **«Հայ ազգի համար այսօր տոն է, որ նվիրված է ոչ միայն Մխիթար Սպարապետին, այլեւ բոլոր սպարապետներին: Այս կամուրջն էլ ի պատիվ Սպարապետի եւ մեր հերոս անցավորների ենք կառուցել, եւ այսօր, կարծեք թե, այդ ստեղծածը լիարժեք վայելելու օրն է: Անչափ ուրախ եմ այսօրվա, այսքան բազմամարդ տոնակատարության համար, իսկապես այսօր ապրում եմ իմ կյանքի ամենաերջանիկ օրը: Շնորհակալ եմ Արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանին՝ այս նախաձեռնության, «Շարմ հոլդինգ»-ին՝ միջոցառման կազմակերպման, ժողովրդին՝ այցելության համար»:**

Տոնակատարության ընթացքում եղան նաեւ մարզական միջոցառումներ՝ նետաձգության, հայկական ազգային կոխի, փեյնթ բոլի մրցաշարեր, որոնց մասնակցելու հնարավորություն էր տրվել բոլոր ցանկացողներին: Հաղթողներն արժանացան նաեւ գավաթների:

Գյուղի մշակույթի տան հարակից տարածքում փոքրիկների համար բեմադրվեց մանկական ներկայացում, տեղի ունեցան համերգներ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի, Արսեն Գրիգորյանի (Մրո) եւ նրա ղեկավարած ազգագրական երգի համույթի մասնակցությամբ:

Ներկաները ողջ օրվա ընթացքում հնարավորություն ունեին օգտվել խնձորեսկցիների ավանդական հյուրասիրությունից, ինչպես նաեւ գնել գյուղացիների պատրաստած էկոլոգիապես մաքուր ավանդական ուտելիքներ, խմիչքներ: Մարզին, ինչպես նաեւ Անիի թագավորության ժամանակահատվածին բնորոշ կերակրատեսակներ ներկայացրեց «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման եւ պահպանման» հկ-ն՝ նշանավոր խոհարար Սեդրակ Մամուլյանի ղեկավարությամբ: Տարբեր տաղավարներում ներկայացվել էին նաեւ ձեռագործ աշխատանքներ, որոնք գնելու հնարավորություն ունեին ներկաները:

Արցախյան ազատամարտում եւ Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին կանգնեցված խաչքարերի մոտ տեղի ունեցավ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի փողային նվագախմբի ելույթը: ՀՀ պաշտպանության եւ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունների ներկայացուցիչները ծաղիկներ խոնարհեցին իրենց անունները հավերժացրած հայորդիների հուշաքարերին:

Տոնակատարության շրջանակներում անցկացվեց նաեւ «Բարեկամություն» ավանդական փառատոնը: Երեւանի Մխ.Հերացու անվան բժշկական համալսարանի ուսանողական խորհրդարանն ու Հայաստանի երիտասարդական հիմնադրամը 2003թ.-ից

էջ 8

Ժառանգությունը եւ բնությունը

Այս տարի «Եվրոպական ժառանգության օրերը», որին միացած է եվրոպական 50 երկիր, անցկացվեց «Ժառանգությունը եւ բնությունը» խորագրով: Սեպտեմբերի 30-ին օրերի շրջանակում միջոցառում անցկացվեց Շմավոն Սովսիսյանի անվան պատմության թանգարանում: «Ժառանգության եւ բնության հանդիպման մի զարմանահրաշ պատմություն» խորագիրն էր կրում թանգարանի մշակութային միջոցառումների կազմակերպիչ Աստղիկ Հակոբյանի զեկուցումը, որ նվիրված էր Տանձափարախի վերականգնողական աշխատանքների ընթացքի հինգ ամյակին: Օրվա բանախոսը նախ՝ պատմական անդրադարձ կատարեց Բեխի կամ Տանձափարախի անապատին, որ գտնվում է Կապանի Բեխ թաղամասից 4 կմ հարավ-արեւմուտք, սաղարթախիտ անտառով շրջապատված:

Համալիրի հիմնադրման մասին պատմագրության մեջ որոշակի բան չկա պահպանված: Առաջին անգամ հիշատակված է 871 թվականին գրված մի վկայագրում, ըստ որի՝ Սյունիքի տեր Սահակի որդին՝ Ջեվանշիր իշխանը, Բաղք գավառում գտնվող իր սեփական Արուքս գյուղը փոխանակում է Սյունյաց եպիսկոպոսների սեփական կալվածք հանդիսացող Բեխ գյուղի հետ: Իսկ Տանձափարախի մասին առաջին հիշատակությունը Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» երկում է, որտեղ ասվում է թե՝ Սյունյաց Ջագիկ իշխանի որդին՝ Վահանը, զարնվելով չար դեւից, հրաժարվում է աշխարհական կարգից, կրոնավոր է դառնում եւ ճգնում Տանձափարախի սուրբ վկայարանում: Վահանը 911 թվականին կառուցում է վանական մի համալիր եւ իր անունով կոչում Վահանավանք: Կնշանակի՝ 10-րդ դարի սկզբին Տանձափարախն արդեն հայտնի միաբանական ուխտ է եղել: Թվարկելով Սյունյաց աշխարհի գլխավոր վանքերից մոտ 30-ի անունները՝ Ստեփանոս Օրբելյանը, Տանձափարախը հիշատակում է 11-րդը՝ Վահանավանքից հետո, նշելով, որ Տանձափարախի կրոնավորները ճգնակյաց էին, խարազնազգեստ, սակավապետ, այսինքն՝ այն եղել է անապատ, որոնցով Սյունիքը հայտնի է եղել դեռ միջնադարից սկսած:

Ստեփանոս Օրբելյանը, տալով Սյունիքի բոլոր նշանավոր մենաստանների կառուցման ժամանակը, ոչինչ չի ասում Տանձափարախի հիմնադրման մասին: Ըստ ամենայնի՝ Տանձափարախն այնքան հին է, որ Ստեփանոս Օրբելյանի օրոք նրա հիմնադրման ստույգ ժամանակը մոռացված է եղել: Դեռեւս միջնադարում Բեխի անապատը շատ կարեւոր ուսումնագիտական կենտրոն է եղել, այնտեղ գրվել են ձեռագրեր, աշխատել է Գրիգոր Տաթեւացու աշակերտ Մաթեւոս վարդապետը:

Բեխի անապատը 17-րդ դարում վերականգնելով՝ գործել է մինչեւ 18-րդ դարի վերջերը. եկեղեցու մի խաչքարի վրա կա 1751 թվականի արձանագրություն: Սակայն հետո այն լքվել է, եւ նրա անունը չի հիշատակվում ո՛չ ազգագիրների, ո՛չ ճանապարհորդների, եւ ո՛չ էլ պատմիչների կողմից:

Բանախոսը ներկայացրեց անապատի ճարտարապետական հորինվածքը. ճանապարհը, որ տանում է դեպի Բեխի անապատ, նշեց նաեւ այն մասին, որ խորհրդային աստվածամերժության տարիներին

էջ 6

ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարար Դավիթ Լոքյանին. հարցում

Մեծարգո՛ պարոն նախարար

Հրապարակայնությունն ու բացախոսությունը դարձել են մեր նոր պետության ամենագնահատելի նվաճումներից մեկը, ինչը նաեւ Հայաստանի Հանրապետության առաջընթացի գրավականներից է:

Այդ առումով հասել ենք մի հանգրվան, երբ հանրությունն իրազեկվում է այնպիսի հարցերի վերաբերյալ նույնիսկ, թե երբ արձակուրդ գնացին երկրի նախագահը, վարչապետը, այս կամ այն նախարարը, որտե՞ղ են նրանք անցկացրել արձակուրդը, հակառակ պարագայում իրավիճակը համարվում է արտառոց եւ տարբեր հարթակներից շատ տեղին հարցեր են հնչում՝ տարակույսներով լեցուն:

Թեեւ Սյունիքում հիմա այնքան էլ ընդունված չեն կամ այնքան էլ հարգի չեն հրապարակայնության ու բացախոսության հանրահայտ սկզբունքները, բայց հանրությունը չի դադարում հետաքրքրվել տեղական ու տարածքային իշխանների վարքուբարքով:

Հետաքրքրություն ներկայացնող հարցերից մեկն առնչվում է Սյունիքի մարզպետի արձակուրդին:

Պաշտոնավարման մոտ մեկ տարում հինգ-վեց անգամ տեւական ժամանակով նա բացակայել է աշխատանքից, որը ներկայացվել է որպես արձակուրդ:

Ամենատեւական արձակուրդը 2017թ. մարտ ամսին էր. մոտ մեկ ամիս աշխատանքի չեկավ՝ իբրեւ պատգամավորի թեկնածու ԱԺ ընտրություններին նախապատրաստվելու պատրվակով:

Ընտրություններից հետո էլ մոտ մեկ ամիս դարձյալ աշխատանքի չհաճախեց (բացառությամբ երկուերեք օրվա)՝ ասում են՝ արձակուրդում էր:

Ընտրություններից առաջ էլ մեկերկու անգամ տեւական ժամանակ բացակայել է՝ իբր արձակուրդում է գտնվել:

Հուլիսի վերջից մինչեւ օգոստոսի 16-ը մարզպետը նորից չկար, ասացին՝ արձակուրդում է:

Սեպտեմբերի 25-ից սկսած դարձյալ չկա, ասում են՝ Իսպանիայի իր ռանչոյում հանգստանում է:

Կարծում ենք՝ արժե հարգել Սյունիքի հանրությանը եւ մարզի հարկատուներին ու մեկ անգամ գոնե պարզաբանել այդ հարցը:

Հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ի պահանջները, խնդրում ենք «Սյունյաց երկիր» թերթին տրամադրել տեղեկություններ այն մասին, թե վերջին մեկ տարում քանի՞ անգամ, ե՞րբ եւ որքա՞ն ժամանակով է Սյունիքի մարզպետը մեկնել արձակուրդ, իսկ եթե նշված ժամկետներում արձակուրդում չի գտնվել, ապա որտե՞ղ է եղել:

Խնդրում ենք միաժամանակ տեղեկություններ տրամադրել այն մասին, թե աշխատանքային ի՞նչ ռեժիմով է աշխատում Սյունիքի մարզպետը:

Ուզում ենք նաեւ իմանալ՝ ո՞վ է Վահե Հակոբյանի բացակայության ժամանակ կատարում Սյունիքի մարզպետի պարտականությունները՝ Վարդան Դավթյան տեղակա՞լը, աշխատակազմի ղեկավա՞րը, թե՞ Միլենա անունով աղջիկը:

Պարո՛ն նախարար

Սյունիքյան հանրության մեջ Դուք վայելում եք մեծ հարգանք եւ հեղինակություն, ինչ-որ առումով համեստության, պարկեշտության, նաեւ օրինապահության տիպար եք:

Ուստի եւ ակնկալում ենք, որ հարգանքով կվերաբերվեք «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներին եւ սահմանված ժամկետում կպատասխանեք մեզ հետաքրքրող հարցերին: Այլապես ստիպված կլինենք մնալ կարծիքին, որ գործ ունենք Սյունիքի մարզպետի կողմից պարբերաբար թույլ տրվող դասալքության եւ գործալքության դեպքերի հետ:

Հաշվի առնելով բարձրացված հարցերի հանդեպ հանրային հետաքրքրությունը, սույն հարցումը թղթային տարբերակով՝ փոստով, Ձեզ ուղարկելուց բացի, հրապարակում ենք նաեւ syuniacyerkir.am կայքէջում:

Հարգանքով՝
Սամվել Ալեքսանյան
«Սյունյաց երկիր» թերթի
խմբագիր
27 սեպտեմբերի 2017թ.

Հանրակրթական 11 դպրոցի տնօրենի՝ կարգապահական տույժ. ինչո՞ւ

Սեպտեմբերի 11-ին Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի ստորագրությամբ տարածվել է կարգադրությունների մի փաթեթ, որի համաձայն մարզի տասնմեկ հանրակրթական դպրոցի տնօրեն ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Այսպես՝ Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի տնօրեն Կարինե Հովսեփյանին՝ նկատողություն, Գորայքի միջն. դպրոցի տնօրեն Մարտուն Թադեւոսյանին՝ նկատողություն, Քաջարանի թիվ 2 միջն. դպրոցի տնօրեն Սպարտակ Ստեփանյանին՝ նկատողություն, Հացավանի միջն. դպրոցի տնօրեն Արտակ Ստեփանյանին՝ նկատողություն, Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի տնօրեն Սիրուշ Ակլունցին՝ նկատողություն, Արավուսի տարրական դպրոցի տնօրենի պաշտոնակատար Նարինե Ջհանգիրյանին՝ խիստ նկատողություն, Կապանի թիվ 5 հիմնական դպրոցի տնօրեն Սիրանուշ Հարությունյանին՝ խիստ նկատողություն, Գորիսի թիվ 3 հիմնական դպրոցի տնօրեն Կարմեն Կարապետյանին՝ խիստ նկատողություն, Սիսիանի թիվ 2 հիմնական դպրոցի տնօրեն Հրանտ Ազարումյանին՝ խիստ նկատողություն, Գեղիի միջն. դպրոցի տնօրեն Խորեն Տեր-Ստեփանյանին՝ խիստ նկատողություն, Մեղրու թիվ 2 միջն. դպրոցի տնօրենի պաշտոնակատար Մերի Հակոբյանին՝ խիստ նկատողություն:

Կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգադրությունների հիմքում միեւնույն եւ ոչինչ չասող ձեւակերպումն է՝ **«հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի զեկուցագիրը»:**

Տույժեր տալու պատճառները նույնպես նույն եւ ոչինչ չասող ձեւակերպումն ունեն՝ **«կազմակերպության կանոնադրությամբ վերապահված լիազորությունները, ինչպես նաեւ հանրակրթական ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները ոչ պատշաճ կատարելու համար»:**

Իհարկե, մարզպետի լիազորությունները թույլ են տալիս հանրակրթական դպրոցի տնօրենին կարգապահական պատասխանատվության ենթարկել, բայց դրա համար որոշակի եւ ծանրակշիռ հիմքեր պիտի լինեն:

Մինչդեռ, մարզպետի կարգադրություններից չի երեւում, թե կոնկրետ ինչի համար են դպրոցի տնօրենները տույժ ստացել:

Ենթադրել կարելի է՝ կամ մարզպետը թաքցնում է տնօրենների թույլ տված խախտումների իրական ծավալը եւ բնույթը կամ տույժերը տրվել են բոլորովին այլ՝ դպրոցի հետ կապ չունեցող պատճառներով:

Առհասարակ, մարզպետարանի կողմից մարզի հանրակրթական դպրոցների կառավարումը վերջին շրջանում լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս:

Հենց այն փաստը, որ 11 դպրոցի ղեկավար պատշաճ չի կատարում (ըստ մարզպետարանի խոստովանության) հանրակրթության ոլորտը կարգավորող օրենսդրությունը՝ արդեն իսկ արտառոցություն է:

Տույժերի այդ շքերթը ցույց է տալիս, որ մարզպետարանի ամենամարդաշատ ստորաբաժանումը՝ կրթության վարչությունը, կազմաքանդված վիճակում է եւ լրիվ ավելորդություն է: Փաստը, որ չորս ամիս շարունակ վարչությունը ղեկավար չունի, խոսում է այդ մասին: Փաստը, որ վարչության պետին՝ Հովիկ Ալեքսանյանին, պաշտոնանկ են արել մի քանի նաժիշտի գայթակղելու համար՝ ավելի է խտացնում վարչության հանդեպ առկա անլրջության մշուշը: Փաստը, որ օգոստոսյան խորհրդակցությունում այդ վարչությունից մեկ հոգու անգամ արտահայտվելու ձայն չտվեցին, ծիծաղելի է դարձնում այդ կառույցի գոյությունն ընդհանրապես: Եվ վարչության՝ պարապությունից տառապող աշխատակիցներն իրենց համար փորձում են զբաղմունք հորինել՝ ըստ սեփական նախասիրությունների: Տարած-բերածը, օրինակ, ստանձնել է մարզպետարանի գերագույն գլխավոր բանսարկուի դերը, երեւանցիների կողմից անցանկալի անձ հայտարարված Հայկը հեռավոր գյուղերից եկած տնօրենների գլխին «մահակ» է բանեցնում՝ իբր ինքը կա եւ սկզբունքային է…

Մարզպետարանից, մինչդեռ, մեր աղբյուրները տեղեկացնում են, որ կրթության ոլորտը մարզում ղեկավարում է ոմն Միլենա՝ Երեւանից բերված: Անգամ Հովիկ Ալեքսանյանի օրերում նա էր վարչությունը ղեկավարում:

Պարզվում է նաեւ, որ ծաղկափթիթ այդ աղջիկն է փաստորեն եւ ինչ-որ առումով համակարգում Վահե մարզպետի գործունեությունը, փոխարինում նրան՝ բացակայության ժամանակ:

Բայց, հանուն արդարության, Միլենայի հանդեպ չպետք է այդքան խիստ լինել: Ի վերջով ո՞ր մի գործով զբաղվի հարգելի նաժիշտը՝ Վահեի՞ն ղեկավարի, էլիզաբեթի ու Ջարուհու խանդի՞ն դիմակայի, պրոֆիլակտորիայի անցուդա՞րձը վերահսկի, Վարդան տեղակալ-բուտաֆորի՞ն աշխատել սովորեցնի, մարզպետի աշխատասենյակ վազող հայտնի կին տնօրենների եկատերինյան խաղե՞րը զսպի, մրցակից աղջիկների՞ն մարզպետարանից դուրս մղի… Իսկապես, ո՞ր մի գործն անի: Եվ, այդուհանդերձ, բազմազբաղ խաթունը ժամանակ պետք է գտնի եւ մի փոքր ավելի զբաղվի Վահեի ու ընդհանրապես մարզպետարանի կառավարմամբ, չէ՞ որ այս փուլում իրեն է վստահված անկախ Հայաստանի ամենառազմավարական մարզի՝ Սյունիքի կառավարումը: Թե չէ ստացվում է՝ հանրակրթական դպրոցների 11 տնօրենի կարգապահական պատասխանատվության են ենթարկում, իսկ վերջիններս, նաեւ կրթության վարչության վայ պատասխանատուները չգիտեն՝ ինչի համար: Թե չէ՝ հանրակրթության մասին օրենսդրությունը, 150 շունչ ունեցող մարզպետարանի հայացքի ներքո, պատշաճ չի կատարվում առնվազն տասնմեկ դպրոցում…

Չէ, Միլենան, այնուամենայնիվ, վատ է կառավարում մարզպետ Վահե Հակոբյանին:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Շաքե հրաշքը կա, մնում է պահպանել այն

էջ 1

Ի դեպ, խորհրդի անդամներից մեկն էլ ես եմ:

Նախնական պայմանավորվածության համաձայն՝ մենք պետք է անպայման ապահովենք ջրվեժի աշխատանքը՝ ընթացքում դիմելով հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ նաեւ որոշակի փոփոխություններ կատարելով՝ դրական իմաստով, որպեսզի ֆինանսապես շատ չտուժենք:

Մեր կազմակերպությունը դիտարկել միայն որպես հէկ, եւ սահմանափակել հարցը, սխալ է, կարելի է ասել՝ ոչինչ չանել. այստեղից սնվում են ընտանիքներ, աշխատատեղեր են գործում: Անմասն չենք մնում նաեւ համայնքային գործընթացներին, միջոցառումներին, օգնում ենք պատերազմի վետերաններին, Արցախյան, ապրիլյան պատերազմների մասնակիցներին, նրանց ընտանիքներին, բոլոր տոնական, նաեւ հիշատակի միջոցառումներին հէկ-ն իր մասնակցությունն ու աջակցության մասնաբաժինն է ունենում:

Արդյունքում՝ դեռեւս գարնան սկզբից ջրվեժը գործում է արդեն իսկ նախատեսված ժամերով:

Բարեբախտաբար, բնապահպանության նախարարությանը կից գործող խորհրդի անդամ է նաեւ տուրիզմի գործակալության տնօրեն Զարմինե Զեյթունցյանը, նրա հետ էլ հանդիպել ենք, լսել բոլոր տուրիստական գործակալությունների տնօրենների, օպերատորների կարծիքը:

Վերջին շրջանում մեծացել է զբոսաշրջիկների հոսքը: Սահմանված գրաֆիկը ցերեկվա ժամը 11-ից 19-ը ընկած ժամանակամիջոցն է, բայց դա քարացած չէ. եթե զբոսաշրջիկն այստեղ է գալիս, ասենք, ժամը 11-ից առաջ կամ երեկոյան ժամը 7-ից հետո, մենք դարձյալ ապահովում ենք նրա հանգիստը, նա առանց ջրվեժի հմայքը վայելելու՝ այստեղից չի հեռանում:

- Պարոն Հակոբջանյան, ջրվեժի լիակատար գործարկման ընթացքում աշխատու՞մ է հէկ-ը, արդյո՞ք թույլատրելի են պարբերական անջատումները՝ հնարավոր խափանման առումով:

- Ագրեգատը շարունակում է աշխատել՝ առանց հզորություն հավաքելու, այդ պարապուրդ ժամերին էլեկտրաէներգիա չենք արտադրում, ուղղակի տեխնիկական նկատառումներով այն աշխատեցնում ենք, որպեսզի ներս ու դուրս անելով՝ չվնասվեն սարքավորումները:

Ջրվեժը, նորից ասեմ, լիարժեք ընթացքի եւ իր տարերքի մեջ է, ապահովված է նրա գործունեությունը, թեպետ եւ արդյունքում հէկ-ը տուժում է՝ ամսական երկու միլիոն դրամի չափով: Այսինքն՝ չորս ամիսների ընթացքում կորցրել ենք շուրջ 8 միլիոն դրամ:

Մենք հաշվի ենք առնում հանգամանքը, որ ջրվեժը հանրային նշանակության կառույց է, եւ մեր՝ այս ընդառաջող քայլից ոչ միայն տեղացի, նաեւ արտերկրից ժամանող զբոսաշրջիկներն են շահում՝ հիանալով մեր շրջանի ամենադիտարժան վայրի բնական գեղեցկությամբ:

- Ստացվում է այնպես, եւ դա իրականում այդպես էլ կա, որ ջրվեժն ու հէկ-ն անքակտելի կապով կապված են միմյանց հետ, մեկի գործունեությունն անմիջականորեն առնչվում է մյուսի գոյության հետ:

Հնարավոր չէ՞, որ ջրվեժն ինքն էլ ներառվի հէկ-ի խնամակալության եւ հոգածության ներքո: Չէ՞ որ նրա պահպանությունն ու զբոսավայրային գործարկումը ոչ պակաս կարեւոր խնդիր են:

- Այդ հարցը քննարկման փուլում է, գործընթացի մեջ, նաեւ՝ բնապահպանության նախարարի առաջարկությամբ, եւ, ամենայն հավանականությամբ ջրվեժը սկզբունքների համակարգման եւ կառավարման կարգով կտրվի մեզ, որպեսզի պատասխանատվություն կրենք նաեւ նրա պահպանության, մաքրության, շրջակայքի կանաչապատման, ծառատնկման, տեղում ծագող այլ խնդիրների, որպես զբոսավայր՝ նրա հետագա զարգացման համար:

- Հետաքրքիր է, ինչպե՞ս են կարգավորվել այդ հարցերը խորհրդային ժամանակներում: Չէ՞ որ այն ժամանակ էլ կար ջրվեժը՝ մշտապես դիտարժան, եւ՝ կար հէկ-ը:

- Խորհրդային ժամանակներում համակարգն ուրիշ էր, նման հարցեր չեն եղել, չեն քննարկվել: Ճիշտ է, երկուսն էլ կային, բայց նման սրությամբ դրված չի եղել ջրվեժի հարցը: Հավանաբար, դարձյալ փոխհամաձայնություն է եղել, ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը չեն տուժել: Կամ տուժել են մասամբ՝ առանց էական վնասի:

Ասեմ, որ նախքան սեփականաշնորհումը, հէկ-ը չէր աշխատում, վնասված էր, ագրեգատները շարքից դուրս եկած էին: Նրա գործարկման համար բավականին լուրջ ներդրումներ ենք կատարել, որպեսզի կարողանանք վերականգնել արտադրությունը: Այնպես որ՝ մինչ այս պահը, կարելի է ասել, տուժում ենք:

Չգիտեմ, չար լեզուներն ի՞նչ են բարբաջում, դա իրենց խնդիրն է, բայց ես խոսքս քամուն տվող մարդ չեմ, իմ ժողովրդի հանդեպ շարունակում եմ նույն սրտացավն ու պատասխանատուն մնալ:

Նախարարի խոսքը գետնով չենք տվել, ոչ էլ մատների արանքով ենք նայում պայմանավորվածությանը: Այսօր էլ, տեսնում եք, ունենք այն, ինչ ունենք. ժողովրդի հոսքը, ինքներդ էլ տեսնում եք, շատ ակտիվ է, բավականին աշխուժացել են այցելությունները:

Ասեմ՝ նաեւ հակված ենք այս ձորը դարձնել մի հրաշալի վայր, որը կարելի է անվանել հանգստյան գոտի, զբոսաշրջիկներին ընդունելու, ժամանցի վայր, որը կունենա ռեստորանային համալիր, հյուրանոց-հյուրատներ…

Հէկ-ի ճանապարհը, որը մայրուղուց մեկ կիլոմետրից ավելի է, ինչպես նաեւ՝ ջրվեժ տանող ճանապարհը, որոշել ենք բարեկարգել, բայց, ցավոք, այդ հարցը դեռ քննարկման փուլում է: Նախորդ տարիներին բավականին միջոցներ ենք ծախսել այդ նպատակով, սակայն, հարկային մարմիններից եկել, արձանագրել են, որ այդ իրավունքը չունենք՝ պատճառաբանությամբ, որ ճանապարհը մեզ չի պատկանում:

Փորձեցի բացատրել նրանց, որ ներդրումներ ենք կատարում, որովհետեւ մտահոգված ենք նորմալ ճանապարհ ունենալու խնդրով, հաշվի չառան: Կարծում եմ, աբսուրդի ժանրից է, երբ գործ անող մարդուն նման անհեթեթ պատճառաբանությամբ արգելում են գործ անել, իր կազմակերպության տարածք կամ զբոսավայր՝ ջրվեժ տանող ճանապարհը վերանորոգել:

Մենք լուրջ ծրագիր ունենք այստեղ՝ շրջակա միջավայրի պահպանության եւ զարգացման հեռանկարների առումով, եւ այդ ծրագիրը պետք է համաձայնեցնենք բնապահպանների, հասարակական կազմակերպությունների հետ:

Այս գեղատեսիլ եւ բացառիկ միջավայրը չէի ցանկանա վերածվեր, այսպես ասած, մանղալային, խորոված-քյաբաբային «գորոդոկի»:

Այդ մեկը թույլ չեմ տա, բացառվում է: Առանց այն էլ որոշ զբոսաշրջիկներ սկսել են սննդի մնացորդներն անարգել աջ ու ձախ նետել, աղտոտել շրջակայքը: Ջրվեժն իր ողջ տարածքով՝ վերից-վար, պետք է պահպանվի, որպեսզի նրա գեղագիտական մթնոլորտը կատարյալ եւ անթերի լինի, չվնասվի բնությունը:

Այն ամենը, ինչ մենք ենք անում, բնությանը, նրա տեղանքին եւ նշանակությանը մազաչափ չի վնասում:

- Պարոն Հակոբջանյան, շատ գեղեցիկ ձեռնարկումներ ենք տեսնում, հետաքրքիր, կանաչ գոտու սկիզբ եք դրել: Պատմեք այդ մասին:

- Մենք շատ հյուրեր ենք ունենում հանրապետության տարբեր վայրերից, Արցախից, նրանք նաեւ այցելում են հէկ, նստում մերձակա տարածքում, հանգստանում:

Տեսնում եք, շրջակայքում ռեստորանային համալիր է կառուցվում, ներսում եւ դրսի տարածքում այցելողների համար առկա է ամեն անհրաժեշտ կառույց:

Ընդամենը ցանկանում ենք, որպեսզի զբոսաշրջիկն այստեղ լիարժեք հանգստանա, սառնորակ ջուր ճաշակի, հիանա գեղատեսիլ ձորով, որը հետագայում կդարձնենք իսկական դրախտավայր՝ իր բոլոր հավելում-կառույցներով:

Զբոսաշրջիկը կարող է այստեղ գիշերել, սնվել, երեկոյան նստել գետի ափին եւ ցանկության դեպքում՝ նույնիսկ ձուկ որսալ:

Արդեն երկու տարի է, ինչ սկսել եմ շուրջ 70-100 հոգու համար նախատեսված ռեստորան- կառույցի շինարարությունը՝ բնության կանաչ գորգով շրջապատված:

Գրեթե ավարտված են հիմնական աշխատանքները, կահավորանքը՝ գնված, պատրաստ, մնում են որոշակի կոսմետիկ սրբագրումներ, որից հետո կսկսենք գետի մաքրումը, նրա պիտանելիությունը կդարձնենք բացարձակ: Ողջ տարածքը՝ որպես հանգստի գոտի, կծառայի ե՛ւ մեծերին, ե՛ւ երեխաներին:

Կարճ ժամանակում ավարտին կհասցնենք տարածքի նախնական աշխատանքները եւ արդեն կփորձենք հյուրեր, զբոսաշրջիկներ ընդունել: Իհարկե, մեր սկսած գործը զարգանալու, ընդլայնվելու տեղ ունի:

- Կա՞ն լուրջ խոչընդոտներ՝ գեղեցիկ նպատակն ավարտին հասցնելու, ծրագիրն ամբողջությամբ կատարելու գործում:

- Վերջին տասը տարվա ընթացքում շուրջ երկու միլիոն դոլարի ներդրումներ ենք կատարել Սիսիանի տարածաշրջանում: Դա չենք բարձրաձայնել, չենք էլ ցանկանում մեր գովեստով զբաղվել:

Խոչընդոտներ եւ արհեստականորեն դրանք ստեղծողներ, ցավոք, կան, մեկը՝ հենց

Նորամուտ Կապանի արվեստի մանկական դպրոցում

Այս տարվա սեպտեմբերից Կապանի արվեստի մանկական դպրոցի մանկավարժական կոլեկտիվն ու սաները նոր ուստարին սկսեցին հիմնանորոգված, վերակառուցված կրթօջախի մասնաշենքում, որտեղ հիանալի պայմաններ են ստեղծված մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության համար: Մեկ տարի առաջ «Նորոգշին» ՍՊ ընկերության շինարարները սկսեցին հիմնանորոգումը: Կառույցի հիմքերն ամրացվել են, շենքի ներսում կատարվել են վերակառուցման աշխատանքներ, տեղադրվել են ձայնամեկուսացման, օդափոխության, հակահրդեհային հարմարանքներ: Այժմ կրթօջախն ունի երկուական հանդերձարան, լոգարան, գործում է ջեռուցման համակարգը, դահլիճի նստատեղերի թիվն ավելացվել է՝ հասնելով 56-ի: Դեպի երկրորդ հարկ տանող աստիճանների ձեւավորումը դաշնամուրի ստեղնաշար է հիշեցնում: Հիմնանորոգում-վերակառուցումն իրականացվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով (նախկին սոցիալական ներդրումների հիմնադրամ), պահանջվող գումարի տասը տոկոսի չափով որպես համաֆինանսավորող հանդես է եկել Կապանի քաղաքապետարանը: Ի դեպ, հիմնովին նորացվել է նաեւ կրթօջախի գույքը: Մինչեւ հիմնանորոգումն ավարտվելը, ժամանակավոր դասերն անցկացրել են Կապանի արվեստի քոլեջում, որտեղ նրանց հատկացվել էր տասը դասասենյակ:

«Սա մեծ ձեռքբերում եմ համարում, տարիներ ի վեր դպրոցի կոլեկտիվը երազում էր այս շենքը տեսնել նորոգված. ուստի կարելի է ասել, որ իրականացավ նրա վաղեմի երազանքը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչները եղան դպրոցում, ծանոթացան շենքային պայմաններին, համոզվեցին, որ այդ պայմաններում այլեւս հնարավոր չէ գեղագիտական դաստիարակություն իրականացնել, որ արվեստի դպրոցը պիտի լինի բարեկարգ եւ ամեն ինչով ապահովված», - դպրոցի հիմնանորոգման նախապատմությունը ներկայացնում է դպրոցի տնօրեն Մարինա Նահապետյանը:

Կապանի արվեստի մանկական դպրոցը հիմնադրվել է 1981 թվականին, հիմնադիր տնօրենը Վալենտին Պետրոսյանն էր, 1983-ից մանկական գեղագիտական դաստիարակության այդ կրթօջախը ղեկավարել է Սեյրան Գրիգորյանը, 2013-ի հոկտեմբերից՝ Մարինա Նահապետյանը: Նախապես դպրոցը ծվարել էր Գարեգին Նժդեհի փողոցի N16 բազմաբնակարան շենքի առաջին հարկում: Աննպաստ էին աշխատանքի պայմանները, անբարեխիղճ բնակիչների պատճառով ջուր էր լցվում դասասենյակները: 1985-ին տեղափոխվեցին ներկայիս շենքը, որտեղ ժամանակին քիմմաքրման ծառայություն էր գործում:

Երեք տասնամյակ գործելուց հետո շենքը հայտնվել էր անմխիթար վիճակում. խունացած, անհրապույր պատերով պարապմունքի սենյակներ, կիսափտած հատակներ:

«Սա ի՞նչ դպրոց է՝ խոնավ, անբարեկարգ, որ իմ երեխային այստեղ բերեմ», - բարձրաձայնում էին որոշ ծնողներ:

«Դասավանդելու պայմանները հեռու էին բավարար լինելուց՝ խոնավ էր, մյուս կողմից՝ վառարանի ծուխն էր խանգարում, պարապմունքներից հետո երեխաներից ծխի հոտ էր գալիս: Մի ժամանակ էլեկտրական տաքացուցիչներ հատկացրին, բայց դրանք ծմռանն էլ ի զորու չէին սենյակներում անհրաժեշտ ջերմություն ապահովել», - վերհիշում է դպրոցի պարուսույց Թամարա Ստեփանյանը, ով արվեստի մանկական դպրոցի առաջին շրջանավարտն է եղել, հետո ավարտել Երեւանի պարարվեստի ուսումնարանի ժողովրդական պարերի դասարանը, քառորդ դար է, ինչ դասավանդում է կրթօջախում:

Այդ ամենից, բարեբախտաբար, միայն հուշ է մնացել:

Արվեստի մանկական դպրոց մեր այցելության օրն ընդունելություն էր կազմակերպվում 2017-2018 ուստարվա համար, իսկ կրթօջախում գործում են հետեւյալ բաժինները՝ պարարվեստի, կերպարվեստի, թատերարվեստի, ժողովրդական գործիքների, մանկական ձայնի պահպանման, լարային եւ դաշնամուրային:

«Այսօր է որոշվում, թե երեխաներն ինչի են ընդունակ եւ ինչ կարողություններ ունեն: Ծնողներն այդպես էլ ասում են՝ ուզում եմ երեխաս ձեր դպրոցը հաճախի,

բայց չգիտեմ՝ որ բաժինն ընտրենք: Հնարավորինս ջանում ենք ճիշտ կողմնորոշել մանուկներին՝ հաշվի առնելով նրանց կարողությունները եւ նախասիրությունները: Եթե լավ լսողություն, հիշողություն, ռիթմի զգացողություն ունի, ուղղորդում ենք ջութակի կամ դաշնամուրի բաժին: Գեղագիտական դաստիարակությունից զատ նաեւ պիտի ճիշտ կողմնորոշենք մեր կրթօջախ ոտք դրած երեխային, քանի որ մեր դպրոցը Կապանի արվեստի պետական քոլեջի համար դառնում է բազային հաստատություն», - ասաց նա եւ հավելեց, որ այսօր կրթօջախում ուսանում է 128 սան, եւս 63 երեխա ընդունվել է: Տարեվերջին 27 սան հրաժեշտ է տվել կրթօջախին:

Թամարա Հայրումյանը, ով կրթօջախի հնաբնակներից է եւ ժողովրդական նվագարանների բաժնի ղեկավարը, դպրոցում աշխատում է 1985 թվականից, Քաջարանի արվեստի դպրոցից է տեղափոխվել այստեղ: Տեղեկացնում է, որ դպրոցի ժողգործիքների բաժնում՝ դհոլ, շվի եւ քանոն են սովորեցնում նվագել:

«Ցավալի էր նախկին պայմաններում աշխատելը, բայց քանի որ կոլեկտիվի մեծ մասն իր գործի նվիրյալն էր, ուշադրություն չէր դարձնում դրան, քանի որ իրենց վստահվել էր երեխաների դաստիարակության գործը, իսկ հիմա հաճույքով ես մտնում դասասենյակ, ձգտում ավելին անել», - ասում է Թամարա Հայրումյանը: Նա մի ալբոմում խնամքով պահպանել է պատվոգրերն ու շնորհակալագրերը, որին արժանացել են ինքն ու իր սաները տարբեր մրցույթ-փառատոներում, նաեւ հաճույքով է տալիս այն սաների անունները, ովքեր հետագայում երաժշտական բարձրագույն կրթություն են ստացել:

Կապանի արվեստի մանկական դպրոցը համալրված է կադրերով, հիմնականում փորձառու մանկավարժներ են աշխատում, որոշները՝ կրթօջախի հիմնադրման օրվանից, այնպես որ՝ սերնդափոխությունը սարերի հետեւում չէ…

Տնօրենի փոխանցմամբ՝ արվեստի մանկական դպրոցի նպատակներից է սաներին ուղղորդել դեպի մասնագիտական կրթություն: Դպրոցի սաներից երեքն այս ամռանն ընդունվել են Կապանի արվեստի պետական քոլեջ. մեկը՝ ժողգործիքների (դհոլ), երկուսը՝ պարարվեստի բաժիններ: Անցած ուստարում արվեստի մանկական դպրոցը հաջողություններ է գրանցել: Մասնավորապես, «Էտյուդ» նկարչության, ասմունքի եւ թատերական արվեստի հանրապետական մրցույթ-փառատոնում, որ կայացել է Երեւանում 2016թ. հոկտեմբերին, կրթօջախն արժանացել է

էջ 8

փաստաթղթային հարցերում: Տարիներ շարունակ այդ քաշքշուկը չի լուծվում՝ նախորդ մարզպետից մինչեւ գործող մարզպետ…

Այսպես ասեմ, տարածքը երկարաժամկետ վարձակալությամբ վերցրել ենք, հէկ-ի տարածքը մերն է, խոսքը նրա շրջակա տարածքի մասին է: Ցանկանում ենք նաեւ մեր վարձակալած տարածքում համապատասխան աշխատանքներ տանել: Դիմել ենք համայնքային իշխանությանը, Շաքեի համայնքի ավագանու որոշմամբ թույլտվություն է տրվել, որպեսզի դիմենք մարզպետարան՝ հողի գործառնական նշանակությունը փոխելու նպատակով:

5-6 տարի է՝ ոչ մի արձագանք չկա: Երեւի շատ դժվար է անխնամ, ոչնչով չգրավող այս հողատարածքը կառուցելու, գեղեցկացնելու նպատակով օգտագործելու մասին որոշում կայացնելը: Հարց է ծագում՝ ո՞րն է ավելի լավ մարդկանց, այստեղ այցելողների համար. գեղեցկությունն ու օգտակարությո՞ւնը, հանգստանալու նորմալ, քաղաքակիրթ մշակու՞յթը, թե՞ քարուքանդ վիճակը:

Մենք, նկատի ունեմ՝ մեր ընկերությունը, պետական քաղաքականություն սիրող մարդիկ ենք, պետության, շրջակա միջավայրի հանդեպ ոչ մի ավելորդություն թույլ չենք տվել, հարկերն ու աշխատավարձերը ժամանակին վճարում ենք: Մեր աշխատողի ամենացածր աշխատավարձը կազմում է 120 հազար դրամից ոչ պակաս: Ինչու՞ եմ սա ասում. դիմում ենք մեր ղեկավարությանը՝ թույլ տալ այս անկյունը դարձնել մի հրաշալի վայր՝ մեր միջոցներով, որից առաջինը կշահեն ժողովուրդը, զբոսաշրջիկները: Ի վերջո, 25 մարդ է աշխատում հէկում, ովքեր 7-8 հոգանոց ընտանիք են պահում: Նրանք նույնպես իրավունք ունեն հանգստի, եւ, ինչու՞ ոչ, տարվա մեջ մի քանի օր հանգստանալու հենց իրենց կազմակերպության շրջակայքում:

Զարմանալի է. մարզպետարանում այս բարի առաջարկին, որ երկու անգամ հաստատվել է Շաքե համայնքի ավագանու որոշմամբ, ոչ միայն զլանում են ընդառաջել, որն է՝ ընդամենը փոխել հողի գործառնական նշանակությունը, նաեւ՝ չեն էլ մերժում:

- Այո, իսկական սֆինքսյան հանելուկ է: Երեւի զարմացել եւ զարմանքից դեռ ուշքի չեն եկել. ինչպե՞ս կարելի է համատարած աղբի եւ ավերակների մեջ գեղեցիկ անկյուն ստեղծել… Այն դեպքում, երբ բոլորը ցանկանում են միայն աղտոտել եւ սպառել, ավերել՝ որքան հնարավոր է շատ:

- Երեւի, ես չգիտեմ, գոնե մերժեին, իմանայինք մեր անելիքը: Հէկ-ի երբեմնի աղբանոց-տարածքը վեր ենք ածել կանաչ գորգի: Վա՞տ է, որ արել ենք: Երեւի դրան էլ նախանձողներ, չկամեցողներ կան՝ ուրախանալու փոխարեն:

Հէկ-ի գործընկերս ու ես շրջակայքը գեղեցկացնելու, կառուցելու եւ ծառեր տնկելու հարցում միատեսակ ենք մտածում: Նա 12 հազար հոլանդական տեսակի խնձորենի է տնկել Իշխանասարի այգում, 1000 հոլանդական տեսակի խնձորենի էլ ես եմ տնկել Շաքեի ջրվեժ տանող ճանապարհին, որն ունի կաթիլային ոռոգում: Իսկ տեսարժան վայր տանող ողջ ճանապարհի աջ ու ձախ եզրերին դիլիջանյան եղեւնիներ ենք տնկել, որոնք շատ շուտով գեղեցիկ ու զով տարածք են ապահովելու ջրվեժ այցելողների համար, բացի նրանից, որ գեղագիտորեն կզարդարեն, ես կասեի, ուխտագնացության ճանապարհը:

- Հապա, խնդիրն ի՞նչն է, այսքան պարզ, ջրի պես թափանցիկ հարց:

- Որքան հասկանում եմ, խնդիրն իմ մեջ է, այդ ես եմ խնդիր նրանց համար: Վստահ եմ, միշտ էլ օգտակար գործ եմ կատարել իմ հայրենի քաղաքի, սիսիանցու համար, հիմա էլ ճանապարհ եւ զբոսավայր կառուցելն եմ համարում հոգուս պարտք ու նվիրում:

Հպարտ եմ, որ ծնվել եմ Սիսիանում, ապրել ու մեծացել այստեղ, այսուհետ էլ միայն բարին եմ անելու իմ ժողովրդի համար: Նա տեսնում, գնահատում է, իմ գործունեությունը հստակ երեւում է նրա հոգու հայելու մեջ: Ինչպես ասում են՝ գործ, ոչ թե՝ խոսք: Սիսիանցին լավ գիտե, որ էլի պատրաստ եմ անձնական շահը ստորադասել հանրային կարեւորությանը, ինչը եւ փաստացի արել ենք Շաքեի ջրվեժի մշտադալար կարկաչի եւ նրանով հիացողի համար:

Ինձ համար կարեւորը ոչ թե իմ բիզնեսն է, այլ այն, որ սիսիանցին այցելի իր հայրենի քաղաքի ջրվեժ, հիանա, հանգստանա, հմայվի նրանով եւ նորից վերադառնա տուն:

Թող գան բոլորն էլ տեսնեն, թե ինչպես է Շաքեի ջրվեժը նախկին գեղեցկությամբ եւ հզորությամբ ջրվեժում, իսկ չար լեզուներն էլ թող պապանձվեն. ջրվեժը գործում է, կա եւ ավելի է հզորանալու:

Վերջում հստակեցնեմ ասելիքս, եւ քայլենք դեպի ջրվեժ: Տարածքը, որը մենք ցանկանում ենք հանգստավայրի վերածել, ըստ էության երկու մասի է բաժանվում. առաջինը հէկ-ի հարակից, սեփական տարածքն է, երկրորդը՝ երկարաժամկետ վարձակալությամբ վերցրած շրջակա տարածքը, որն ուզում ենք կառուցապատել, զբոսավայրին վայել գոտի դարձնել:

Գուցե պետք է դա ավելի շուտ կատարեինք, բայց այն ժամանակ պատրաստ չէինք դրան:

Հիմա, կընդառաջե՞ն, կփոխե՞ն հողի գործառնական նշանակությունը՝ շնորհակալ կլինենք, կշարունակեն լռել՝ Աստված իրենց հետ, թող լռեն, ինչպես ասացիք՝ Սֆինքսի լռությամբ:

Ես իմ բարի գործն արել եւ միշտ էլ անելու եմ, քանի որ դա գեղեցիկ է, ակնահաճո, հետաքրքիր հանգիստ է խոստանում թե՛ իմ երկրացուն, թե՛ այստեղ այցելող, աշխարհին իր հիացմունքի մասին պատմող եւ մեր շրջանի փառքը տարածող օտարերկրացուն:

Հ.Գ. Երեւաց Շաքեի ջրվեժը… Կա Շաքե հրաշքը եւ, համոզված եմ, այն ավելի է գրավիչ դառնալու տարածքի զբոսավայրային նախադուռ հէկ-ից սկսած՝ հետագա կառուցմամբ, զարգացմամբ:

«Ոչ ոք չի այցելում, ցամաքել է, ջրերը խմում է հէկ-ը». կատարյալ սուտ է: Առաջվա պես ջրվեժի արծաթե ցայտերն անգամ քշում են քեզ, ողողում սառնաշունչ ջրերով, հիացնում:

Օրական ութ պիկ ժամ նույն հզորությամբ Շաքեի ջրվեժը ջրվեժվում է, իսկ երեկոյան նրա վարսափնջերից քաղած լույսը զրուցում է մարդկանց տներում: Սիսիանցի է տերը, լավ հայ, Շաքե գեղեցկությունը, հայրենյաց շենությունը գնահատող սյունեցի հայ:

Մնում է զարմանալ, որ օգտակար գործ անելն էլ կուսակցական պատկանելություն պետք է ունենա մեր այս փոքրիկ, առաց այն էլ՝ այնքան զարկված եւ զրկված հայրենիքում…

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Ժառանգությունը եւ բնությունը

էջ 3

անապատը գոմի էր վերածվել, որտեղ խոզեր էին պահվում: Անդրադառնալով մերօրյա ժամանակներին, Ա.Հակոբյանը տեղեկացրեց, որ 2012 թվականից «Երկիր եւ մշակույթ» կազմակերպությունը Տանձափարախում կատարել է մաքրման եւ վերականգնողական աշխատանքներ, որի մեկնարկման համար մեծ ջանքեր գործադրեց նաեւ կազմակերպության կենտրոնական վարչության անդամ, վերականգնող ճարտարապետ Ստեփան Նալբանդյանը, ով էլ դարձավ ծրագիրն իրականացնող արշավախմբի ղեկավարը:

Վանական համալիրի պեղման, մասնակի ամրակայման ու նորոգման աշխատանքները շարունակվում են մինչեւ այսօր: Ամեն տարի արշավախումբը 20 օր աշխատում է անապատի տարածքում:

Աստղիկ Հակոբյանի բացատրություններն ուղեկցվում էին լուսանկարների ցուցադրմամբ: Բանախոսը պատեհ առիթը բաց չթողեց հիշատակելու Տանձափարախի նվիրյալներին՝ արշավախմբի ղեկավար Ստեփան Նալբանդյան, Ժիրայր Գասպարյան (բնակվում է Փարիզում), Բեխի թաղային լիազոր Ռաֆիկ Հայրապետյան, Աստղիկ Հակոբյան, Սասուն Ալեքսանյան, Արա Մարգարյան, Կարեն Քոլոյան, հնագետներ՝ Արմանը, Տիգրանը, Հարությունը, կամավորներ Ֆրանսիայից, Անգլիայից եւ ուրիշներ: Աշխատանքների հիմնական ծանրությունն իր ուսերի վրա էր վերցրել Բեխի բնակչությունը, ովքեր ձիերով անապատ էին հասցնում արշավախմբի անդամներին, նրանց կեցության համար անհրաժեշտ պարագաներ եւ շինանյութ:

Միջոցառման վերաբերյալ իրենց նկատառումները հայտնեցին Ռաֆիկ Հայրապետյանը, Աշոտ Հայրումյանը, Գրիշա Սմբատյանը, Լիլիթ Առաքելյանը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը եւ ուրիշներ:

Թանգարանի մի ցուցափեղկում ներկայացված էին Բեխի անապատում կատարված վերականգնողական աշխատանքների ժամանակ գտնված հինավուրց իրեր եւ առարկաներ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Կապանի օդանավակայանը 25 տարով անհատույց հանձնվել է կոնցեսիոն կառավարման

էջ 1

որ կոնցեսիոներն իրավունք ունի, նախապես համաձայնեցնելով կոնցեդենտի հետ, կառուցել եւ վերակառուցել օդանավակայանային օբյեկտներ: Ինչպես հայտնի է, թռիչքուղու վերանորոգման աշխատանքներն սկսվել էին գարնանը, իսկ ժամում մինչեւ 100 ուղեւոր սպասարկելու հնարավորություն ունեցող համալիրի մակետն արդեն տարածվել է համացանցում:

Մենք հունիսին այցելել էինք օդանավակայան, հերթական անգամ եղել ենք այսօր: Ինչպես կարելի է տեսնել նկարներում, դեռեւս կատարվում են հողային աշխատանքներ թռիչքադաշտի անվտանգության գոտում: Հիշեցնենք, որ, ըստ մարզպետ Վահե Հակոբյանի, նախատեսվում է օդանավակայանը շահագործման հանձնել 2018-ի առաջին կիսամյակում:

Պայմանագրի ավարտից հետո ամբողջ նորակառույց գույքն իբրեւ սեփականություն անցնելու է Կապան համայնքին: Նշենք, որ կոնցեսիան հետագայում կարող է երկարաձգվել եւս 10 տարով:

Փաստաթղթում կետ կա այն մասին, որ կոնցեդենտն իրավունք ունի հենց ինքը ստանձնել կառավարումը, եթե կոնցեսիոները 15 օր շարունակ չմատուցի օդանավակայանային ծառայություններ եւ որեւէ էական առումով չհետեւի օրենսդրության կամ պայմանագրի դրույթներին: Նշված են նաեւ պայմանագիրը լուծելու հնարավոր հիմքերը՝ պարտավորությունների չկատարում կամ խախտում, ֆորս մաժոր, փոխադարձ համաձայնություն եւ այլն: Պայմանագրի ավարտից հետո գույքն այնպիսի վիճակում պիտի վերադարձվի համայնքին, որ հնարավոր լինի օդանավակայանն առանց դադարի շահագործել առնվազն եւս 3 տարի՝ առանց այլ ներդրումներ անելու:

Կոնցեսիոներն ինքն է սահմանելու օդանավակայանային ծառայությունների սակագները (այդպիսիք են, օրինակ, օդանավերի եւ ուղեւորների սպասարկման, ինքնաթիռների կայանման վճարները, վառելիքի գինը, որոնք արտահայտվում են ավիատոմսի արժեքի մեջ), նաեւ իրավունք ունի կառույցի տարածքում երրորդ անձանց տրամադրել առեւտրային գործունեության թույլտվություն:

Կոնցեսիոների տերը հիմնադրամն է

««Սյունիք» օդանավակայան» ՍՊԸ-ն հիմնադրվել է այս տարվա մայիսի 18-ին: Անունից իսկ հասկանալի է, որ այն ստեղծվել է կոնկրետ օդանավակայանի շահագործման նպատակով: Ընկերությունը գրանցված է Կապանի Հունան Ավետիսյան փողոցում: Միակ մասնակիցը Սյունիքի մարզի զարգացման եւ ներդրման հիմնադրամն է: ՍՊԸ-ի տնօրենը 33-ամյա երեւանցի Հրաչիկ Այվազյանն է, որը, ինչպես տեղեկանում ենք նրա ֆեյսբուքյան էջից, այս տարվա փետրվարից ծրագրերի համակագրող է աշխատում նշված հիմնադրամում:

Հավելենք, որ հիմնադրամն էլ գրանցվել է 2016-ի դեկտեմբերի 26-ին, պետության կողմից դրա կառավարման լիազորված մարմինը Սյունիքի մարզպետարանն է: Հիմնադրամի հասցեն մարզպետարանի շենքն է Կապանում: Սկզբնապես տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը մեկ ամիս եղել է մարզպետ Վ. Հակոբյանի խորհրդական Սահակ Հակոբյանը, որը նախկինում աշխատում էր ՀՀ քաղավիացիայի գլխավոր վարչությունում իբրեւ աշխատակազմի ղեկավար: Ս. Հակոբյանից հետո այս տարվա հունվարին հիմնադրամի տնօրեն է նշանակվել Կոտայքի մարզի Վերին Պտղնի գյուղի բնակիչ, 31-ամյա Դավիթ Աբովյանը: Փաստորեն, հիմնադրամը իր ստեղծած ՍՊԸ-ի միջոցով կշահագործի օդանավակայանը: Սա շեշտում ենք, քանի որ ժամանակին նույն Ս. Հակոբյանը մարզային «Սոսի» հեռուստաընկերությանը հայտնել էր, որ շահագործողը լինելու է այն կազմակերպությունը, որը հնարավորություն ունի ներդրումներ կատարել: Իսկ օդանավակայանում ներդրումներ անում են այս հիմնադրամը եւ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը (ՁՊՄԿ):

Մարզպետարանից մեզ հայտնել էին, որ նախնական գնահատմամբ օդանավակայանի վերագործարկման ծրագիրը (ուղեւորային համալիրի կառուցում, թռիչքուղու վերանորոգում, աերոդրոմային ծառայություններ) կարժենա 2 մլն դոլար, որի մեջ, սակայն, ներառված չէ օդանավերի ձեռքբերման արժեքը: Մարզպետ Վահե Հակոբյանը նշել է, որ «L-410» տիպի տուրբոպտուտակային ինքնաթիռը, որը բերվելու է Կապան, արտադրվել է 2016-ին եւ նախատեսված է 19 հոգու համար: Խոսքը, թերեւս, «L-410UVP-E20» մոդիֆիկացիայի մասին է, որի չօգտագործված մոդելի գինը, ըստ տեղեկությունների, 2,4 մլն եվրո է կամ ավելի քան 2,8 մլն դոլար (էլեկտրոնային դիսփլեյներով զինված օդաչուական խցիկ ունեցող տեսակները գնահատվում են 2,6 մլն եվրո կամ ավելի քան 3 մլն դոլար): Այսինքն՝ միայն մեկ ինքնաթիռի գինը հավասար է կամ գերազանցում է մնացած աշխատանքների արժեքին:

Պատահական չէ նաեւ, որ Կապանի օդանավակայանն այսուհետ կոչվելու է «Սյունիք», ինչում չի կարելի չնկատել Սյունիքի մարզի զարգացման եւ ներդրման հիմնադրամի, Քաջարանում գործող ՁՊՄԿ-ի ու Սյունիքի մարզպետարանի հետքը: Բայց շեշտենք, որ Սյունիքի մարզում օդանավակայան կա ոչ միայն Կապանում, այլեւ Սիսիանում, Գորիսում, Մեղրիում: Այս առումով Սյունիքը Հայաստանի, այսպես ասած, ամենահարուստ մարզն է:

Օդանավակայանը կտրվի անհատույց

Թե Կապանի ավագանու օգոստոսյան որոշման, թե կոնցեսիոն պայմանագրի մեջ որեւէ նշում չկա պայմանագրի գնի մասին: Արդյո՞ք սա նշանակում է, որ օդանավակայանը կոնցեսիոներին տրվել է անհատույց: Կապանի քաղաքապետարանից պատասխանել են, թե խոսքն իրականում օդանավակայանին բնորոշ ու անհրաժեշտ ենթակառուցվածքներ չունեցող կառույցի մասին է, որը փաստացի ունեցել է միայն թռիչքուղի, իսկ մնացած հարմարությունների ստեղծումն ու բարելավումը հենց կոնցեսիոների պարտականությունն է:

Սրանից հետեւում է, որ համայնքի օգուտն օդանավակայանի կոնցեսիայից ոչ թե լինելու է ուղղակի՝ ֆինանսական շահույթի տեսքով, այլ անուղղակի՝ տրանսպորտային ենթակառուցվածք, որն օդային կապ է ստեղծում մայրաքաղաքի հետ, չի բացառվում նաեւ տեղի բնակչության համար որոշակի քանակի աշխատատեղերի ստեղծումը եւ այլն, իսկ հեռուն նայող լավատեսների համար՝ 25-35 տարի անց օդանավակայանն ամբողջ անշարժ գույքով վերադարձվելու է համայնքին, այլ հարց է, թե ինչ կլինի այն ժամանակ:

Ինչպես գրել էինք նախորդ հոդվածում, Կապան-Երեւան մեկ թռիչքի ավիատոմսի նախնական գինը 20.000 դրամի սահմաններում է: Սա մարզպետարանի հայտնած տվյալն է, որը նշել էր նաեւ հետեւյալը. **«Սյունիքի մարզի զարգացման եւ ներդրման հիմնադրամը արդեն պատրաստակամություն է հայտնել սուբսիդավորել առողջության նկատառումներով մայրաքաղաք շտապ տեղափոխվելու անհրաժեշտություն ունեցող ուղեւորների ճանապարհածախսը»:**

Կապանից Երեւան եւ հակառակ ուղղությամբ աշխատող տաքսիները տեղ են հասնում մոտ 5 ժամում, ինքնաթիռով դա հնարավոր կլինի 40 րոպեում, սակայն տաքսու մեկ տոմսն արժե 6000 դրամ, մյուս կողմից՝ կապանյան տաքսիների առավելությունը ոչ թե ավտոկայանից ավտոկայան, այլ առանց հավելավճարի հենց տնից տուն տեղափոխությունն է: Միջին խավի համար, որը, մեր գնահատմամբ, Կապան-Երեւան-Կապան ուղեւորահոսքի հիմնական զանգվածն է, 20.000 դրամը թանկ է: Բնականաբար, հրատապ անհրաժեշտության դեպքում այդ խավն էլ գուցե օգտվի ինքնաթիռից: Իսկ միջինից բարձր կարողության տեր անձանց կամ ուղեւորների համար 20.000-ը միանգամայն հարմար գին է:

Դեռեւս հունիսին ՀՀ քաղավիացիայի գլխավոր վարչության պետ Սերգեյ Ավետիսյանը նշել էր, թե փոքր օդանավի տոմսն, առհասարակ, երբեք էժան չի լինում, ապա հավելել. «Կարծում եմ, որ սկզբում դա լինելու է որպես աերոտաքսի, ըստ պատվերի, ըստ պահանջարկի»: Սակայն Սյունիքի մարզպետարանից «Հետքին» հայտնել էին, որ լինելու են Կապան-Երեւան-Կապան կանոնավոր չվերթներ, ինչը նշանակում է կոնկրետ պարբերականություն: Բայց շարունակական ու կանոնավոր լինելու համար պիտի լինի համապատասխան ուղեւորահոսք: Հասկանալի է նաեւ, որ օդանավակայանից պոտենցիալ օգտվողներ են լինելու Կապանի, Քաջարանի ու Ագարակի մետաղական հանքավայրերը շահագործող հայտնի ընկերությունների ղեկավարները, Սյունիքի հարավային հատվածի (գուցեեւ Գորիսի տարածաշրջանի) գործարարությունը:

Կապանի օդանավակայանը բացվել է 1972-ին, չնայած այստեղի աերոդրոմում թռիչքներ կատարվել են դեռ 1940-ականներին: «Յակ-40» ինքնաթիռի տոմսի արժեքը, ինչպես պատմում են կապանցիները, 7-10 ռուբլի էր: 1970-80-ականներին խորհրդային 1 ռուբլին հավասար էր մոտ 1,4 դոլարի, այսինքն՝ տոմսն արժեր 10-14 դոլար: Այսօր 20.000 դրամը հավասար է 42 դոլարի: Բնականաբար, այնպես չէ, որ դոլարն այս ընթացքում արժեքային փոփոխություն չի կրել, առկա է նաեւ խորհրդային եւ ներկայիս հայաստանյան տնտեսությունների սարուձորի տարբերությունը. միայն մեկ օրինակ՝ ավիավառելիքը, որը մեզանում ավիատոմսի գնի ձեւավորման կարեւորագույն բաղադրիչներից է, հայկական ընկերությունները ձեռք են բերում արտերկրից, ինչը չկար ԽՍՀՄ-ում: Կա նաեւ նույն տարածությունն անցնող երկու օդանավերի՝ 27-40 հոգի տեղավորող «Յակ-40»-ի ու 15-19 հոգու համար նախատեսված «L-410»-ի ծախս-օգուտի տարբերությունը: Այդուհանդերձ, զուտ ուղեւորի գրպանի համար տարբերությունը նախկինի ու ներկայի միջեւ շոշափելի է:

ՎԱՀԵ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ
30 սեպտեմբերի 2017
hetq.am

ՆԱՐԵԿ ՕՐԴՅԱՆ. Սյունյաց աշխարհի մերօրյա քանդակագործը

էջ 1 հուշակոթողն էր, դեռեւս ուսանող է եղել, երբ սկսել է քանդակել, նաեւ թերահավատներ կային, թե կարո՞ղ է նման բարդ գործի տակից դուրս գալ: 3.5 մետր բարձրությամբ մի հսկա քարաբեկորից է կերտել, ավարտուն տեսքով հուշակոթողը 3.3 մետր բարձրություն ունի: Մոնումենտալ այդ աշխատանքը քանդակել է երկու տարում: Շնորհակալ է Սյունիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանին, ով վստահել է, ոգեւորել, նաեւ հովանավորել, որ սկսի պատասխանատու գործը: Այդ կարեւոր գործը կյանքի է կոչել Տաթեւացու ժամանակաշրջանը, նրա գործունեությունն ուսումնասիրելուց հետո:

Ասում է, որ ամեն մի քանդակ կերտելուց առաջ անպատճառ պիտի իմանա այդ անձնավորության անցած ուղին, նրա ապրած ժամանակաշրջանը (ինչպես, ասենք, Իսրայել Օրու): Երիտասարդ քանդակագործի համար ռիսկային էր Տաթեւացու հուշակոթողի քանդակումը ստանձնելը, բայց առաջին գործը կուտ չգնաց: 2010 թ. հոկտեմբերի 16-ին, երբ նշվում էր Գորիսին քաղաքի կարգավիճակ շնորհելու 140-ամյակը, Գրիգոր Տաթեւացու անվան հրապարակում հանրապետության նախագահի մասնակցությամբ բացվեց եռամեծար փիլիսոփա, մանրանկարիչ եւ աստվածաբան Գրիգոր Տաթեւացու հուշարձանը. հիշարժան օր՝ երիտասարդ քանդակագործի համար:

«Եթե Տաթեւացու արձանը չլինի Գորիսի կենտրոնական հրապարակում, մեր քաղաքից մի շատ կարեւոր բան պակասած կլինի», - այժմ ասում են գորիսեցիները: Հետո եղան նոր գործեր, Վազգեն Սարգսյանի բրոնզաձույլ արձանը 2015թ. ապրիլի 2-ին տեղադրվեց Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում՝ Արցախյան գոյամարտում զոհված կապանցիների շիրիմներն ամփոփող պանթեոնում:

Անցած տարի Գորիսի պետական համալսարանի բակում մշտական գրանցում ստացավ հայազգի նվիրյալ Շահան Նաթալիի կիսանդրին:

Արդեն պատրաստ է Իսրայել Օրու բրոնզաձույլ կիսանդրին, որը պիտի տեղադրվի Անգեղակոթում: Ձեռնարկել է կերտելու մարզպան Վասակ Սյունու արձանը, որ այժմ կիսատ է:

Վերջնական տեսքի պիտի գան Գարեգին Նժդեհի եւ հայ ազգային-ազատագրական շարժման նվիրյալ, Նժդեհի եւ Անդրանիկի զինակից Պողոս Տեր-Դավթյանի կիսանդրիները:

...Հատիչով եւ մուրճով քարին շունչ տալու արվեստը վաղնջական ժամանակներից է գալիս: Հին Հունաստանում քանդակագործությունը հասավ ամենաբարձր մակարդակի: Հեգելն արվեստի դասական (անտիկ) շրջանը կապում է հենց քանդակագործության հետ: Հայ քանդակագործական արվեստն էլ երեւելի անուններ է տվել: Ո՞վ է ամենից ավելի մեծ տպավորություն թողել Նարեկ Օրդյանի վրա: **«Հակոբ Գյուրջյանը, - ասում է նա, - Գյուրջյանի ստեղծագործության մեջ միահյուսվում են Արեւելքի հնագույն եւ եվրոպական նոր արվեստների լավագույն ավանդույթները: Շատ եմ հավանում Գյուրջյանի «Հաղթանակ» քանդակը: Հետաքրքիր ոճ ունի՝ իր ընդհանրացումներով, իր պլաստիկայով»,** - բացատրում է: Այն համոզմունքն ունի, որ քանդակագործը պետք է վեր կանգնի նյութականից. **«Քանդակագործը հոգին չպիտի վաճառի նյութական բարիքներին: Եթե արվեստագետը, քանդակագործը մտածում է փող աշխատելու մասին, նրան մեռած կարելի է համարել (գոնե արվեստում)»**:

Գրողներ, արվեստագետներ կան, ովքեր իրենց գործը ստեղծելուց հետո ասում են՝ եթե նորից սկսեի, այլ կերպ կլիներ վերջնական արդյունքը: Նարեկ Օրդյանը նման զգացողություն ունեցե՞լ է: **«Իհարկե, ես էլ եմ նման զգացողություն ունեցել: Տաթեւացու քանդակի վրա աշխատելիս որոշել էի կոմպոզիցիան փոխել, բայց արդեն ուշ էր, աշխատանքը կիսով չափ արել էի, արդեն հնարավոր չէր»:**

Ներկայացնում է գործերը՝ «Գաղթի ճանապարհին (սարսափն աչքերին մանուկ է՝ մոր շալակին), «Երեւակայություն», «Եվրոպայի առեւանգումը» (ցուլի տեսքով Զեւսը փախցնում է աղջկան), նաեւ հոռետեսական անվանումներով քանդակներ՝ «Հուսահատություն», «Տառապանք» եւ այլն: Գործերի մեջ նկատվում է թեմատիկ բազմազանություն:

Քանդակագործն իր աշխատանքում տարբեր նյութեր է օգտագործում՝ բազալտ, գրանիտ, մարմար, բրոնզ եւ այն: Ո՞րին է նախապատվություն տալիս Նարեկը. **«Նշանակություն չունի, ոսկորից էլ եմ քանդակ արել, փայտից էլ, գրանիտից էլ եւ այլն, կոմպոզիցիայի ձեւից, կոնկրետ քանդակի ձեւից է կախված, թե ինքն ինչ նյութից պիտի լինի: Կարեւորը նյութը ճիշտ ընտրելն է: Օրինակ, Տաթեւացու արձանը չէր կարող բրոնզից լինել: Նյութի սխալ ընտրության պատճառով քանդակը կարող է արժեզրկվել»,** - ասում է ու հավելում, որ իրեն ինչքան հիշում է, քանդակել է՝ պլաստիլինից, փայտից, հետո ավելի կարծր նյութերից:

Իսկ երբեւէ գեղանկարչությամբ չի՞ զբաղվել. նրանց տան այն հարկաբաժնում, որտեղ մեկտեղված են ավարտուն (եւ ոչ այնքան) քանդակները, պատերին կախված էին հոր վրձնած գեղանկարները. **«Իմ գեղանկարները չեմ ցուցադրում, բնավորություն է, դրանք վեր են ածվում քանդակների եւ նոր միայն ներկայացվում հանրությանը»:**

Չի՞ կարծում, որ Գորիս քաղաքին պակասում են ճարտարապետական փոքր ձեւերը (քանդակները). **«Այն կարծիքին եմ, որ ամեն մի քանդակ տեղ չպիտի գտնի քաղաքի պուրակներում, ծառուղիներում: Կարող է մեկը գեղանկար գնի եւ կախի իր տան պատին: Բայց քանդակը դեմք է ներկայացնում, քաղաք է ներկայացնում, քաղաք մտնողն ի՞նչ կասի: Քանդակները պրոֆեսիոնալ քանդակագործները պիտի անեն, ամեն հատիչ ու մուրճ բռնող քանդակագործ չէ: Մեկը մի պարզունակ խաչքար է պատրաստում, թե՝ քանդակագործ եմ, քանդակ եմ արել: Խաչքարագործությունն ու քանդակագործությունը տարբեր բաներ են: Խաչքարը հայերիս այցեքարտն է, դրանով են մեզ ճանաչում աշխարհում: Բայց այստեղիցայնտեղից գտած զարդանախշեր են բերում, կցում-կցմցում, իրար հետ բնավ կապ չունեցող: Նայում ես, հա, սիրուն է, բայց հո սիրունով չէ: Ասելիք չկա մեջը»:**

Մեր զրույցում քանդակի հետ կապված ոչ մի դետալ չի վրիպում Նարեկի ուշադրությունից: Ասում է, որ քանդակի, հուշակոթողի պատվանդանը եւս ճիշտ պիտի ընտրվի: **«Եթե պատվանդանը ճիշտ չի ընտրվում եւ սխալ տեղ է տեղադրվում՝ միջավայրի հետ «չխոսող», քանդակը խեղճանում է»:** Նրա կերտած գործերի մասին փորձում եմ մեկնաբանություն ստանալ. **«Համոզված եմ՝ եթե հեղինակն իր աշխատանքը մեկնաբանում է, արժեզրկում է այն: Տեսնողն ինքը պիտի ընկալի գործը: Այլ բան է, որ կարող է անհասկանալի դետալներ լինել»:**

Օրվա մեջ այնպիսի պահեր չկա՞ն, որ ավելի հաճույքով է ստեղծագործում: Նման պահեր չկան, բայց իրեն լավ է զգում, երբ սիրելի գործով է զբաղված, սիրում է, երբ անկաշկանդ ստեղծագործում է. **«Եթե մի բան գալիս է մտքիս, պիտի անեմ, չեմ կարողանում հանգստանալ: Չեմ սիրում, երբ ստեղծագործող մարդը կապկում է, շատերը կեղծում են, չեն ասում ճշմարտությունը»:**

Հետաքրքրվեցինք քանդակագործի ստեղծագործական ծրագրերով: Մի «հանդուգն» մտահղացում ունի՝ կերտել Մովսես Խորենացու արձանը: Հզոր գործ է լինելու՝ 15-20 մետր բարձրությամբ: Այժմ արձանի էսքիզներն է անում: Խոստովանում է, որ չափազանց պատասխանատու գործ է ձեռնարկել, բայց այն վստահությունը, որով տոգորված էր նրա խոսքը ստեղծվելիք հուշակոթողի մասին, հույս է ներշնչում, որ Գորիսի բարձունքներից մեկին (ինչպես ինքն է նախատեսում) կհառնի Պատմահոր հուշակոթողը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Թատերաշրջանը մեկնարկեց

Հոկտեմբերի 3-ին բացվեց Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի 82-րդ թատերաշրջանը: Հանդիսականի դատին ներկայացվեց իտալացի հայտնի դրամատուրգ Էդուարդո Դե Ֆիլիպպոյի «Ամուսնություն իտալական ձեւով» մեկ գործողությամբ լիրիկական կատակերգությունը: Այն բեմադրել եւ երաժշտական ձեւավորումն իրականացրել էր ՀՀ վաստակավոր արտիստ Հովհաննես Հովհաննիսյանը, գլխավոր դերերում՝ Արտավազդ Գրիգորյան, Գայանե Վարդիկյան:

Հայաստանի թատրոնների բեմերում հաճախակի է բեմադրվել այս ներկայացումը: **«Աշխատել ենք՝ որքան հնարավոր է, նորովի մոտենալ, նորովի մեկնաբանել, ձգտել ենք գտնել նյութը մատուցելու գեղագիտական նոր ուղղություն: Ինձ համար հետաքրքիր էր Ֆիլումենա Մարտուրանոյի ներքին աշխարհի բացահայտումը, կին, ով ճակատագրի բերումով կապվել է մեկի հետ, երազում է ընտանիք կազմել: Իրավիճակը կոմիկական է, կին, ով ունի երեք երեխա, ունի ամուսին, բայց ոչ մեկն իրենը չեն: Պիեսի վերջում հաջողվում է իրականացնել իր ցանկությունը, իր երեք զավակներին եւ ամուսնուն հավաքել մի տանիքի տակ»,** - առաջնախաղից առաջ «Սյունյաց երկրին» ասաց Հովհաննես Հովհաննիսյանը:

Սա նրա չորրորդ ներկայացումն է կապանյան բեմում: Հովհաննիսյանը կապանյան թատերական կյանքին կապված է անցյալ դարի 80-ական թվականներից: 1986-1989թթ. աշխատել է Կապանի պետթատրոնում: Իր ասելով՝ դերասանական առաջին մկրտությունը ստացել է Կապանի բեմում. մինչ այդ՝ ավարտել էր Գյումրու թատերական ստուդիան, Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտը: Կապանի պետթատրոնում նրա բեմելը եղել է «Սպանված աղավնի» ներկայացման ժամանակ՝ Գարեգին Սիսակյանի դերում:

Բեմադրության ավարտին Կապանի արվեստի մանկական դպրոցի՝ ներկայացմանը մասնակցած չորս սանի հանձնվեց շնորհակալագիր:

Մնում է ավելացնել, որ տարիներ առաջ Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնում բեմադրվել էր Էդուարդո Դե Ֆիլիպպոյի «Ցիլինդրը» ներկայացումը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Խնձորեսկում տոն էր

էջ 2 անց են կացնում փառատոն, որն այս տարի փոխել է ձեւաչափը՝ արտասահմանցի ուսանողներին Երեւանից դուրս եւս Հայաստանի մշակույթին ու ավանդույթներին ծանոթանալու հնարավորություն տալու նպատակով: Խնձորեսկում բուհի շուրջ 26 երկրի ուսանող ներկայացրին իրենց երկրի մշակույթը՝ երգն ու պարը, խոհանոցը, ազգային հագուստը:

Խնձորեսկում տոնական միջոցառումները եզրափակվեցին գալա համերգով՝ Շուշան Պետրոսյանի, ՀՀ պարի պետական անսամբլի, «Կարին» համույթի, Արսեն Գրիգորյանի (Մրո), Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի փողային նվագախմբի, զուռնաչիների ու դհոլչիների մասնակցությամբ: Համերգի ընթացքում ցուցադրվեցին նաեւ տոնակատարության համար պատրաստված տեսաֆիլմեր:

Թմբկահար աղջիկների քայլերթը տոնին հետաքրքիր երանգ հաղորդեց, նրանց ուղեկցությամբ դիմավորեցին դպրոցի բակում հավաքված բազում ներկաները ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին, ով մինչ այդ հարգանքի տուրք էր մատուցել Մխիթար Սպարապետի հիշատակին:

Տոնակատարությանը ներկա էին նաեւ ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը եւ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանը:

Երեկոյան Խնձորեսկյան երկինքը երփներանգվեց հրավառությամբ, իսկ այս տոնն անցավ բարձր մակարդակով, ջերմ մթնոլորտում, որ, հուսանք, բարի ավանդույթի սկիզբ կդառնա:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նոյեմբերի 5-ի ընտրություններին ընդառաջ. հայտնի են համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամի թեկնածուները

Սյունիքի մարզի խոշորացվող երեք համայնքի՝ նոյեմբերի 5-ին կայանալիք ՏԻՄ ընտրությունների նախապատրաստությունը նոր փուլ է թեւակոխում:

Հայտնի են համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամի թեկնածուները:

Կապան համայնքի ղեկավարի թեկնածու են առաջադրվել Կարեն Հակոբյանը (Վերին Խոտանան համայնքի ղեկավար, ՀՀԿ անդամ, ինքնաառաջադրում), Աշոտ Հայրապետյանը (Կապանի գործող քաղաքապետ, ՀՀԿ անդամ, առաջադրել է Հայաստանի հանրապետական կուսակցությունը):

Սիսիան համայնքի ղեկավարի թեկնածու են առաջադրվել Կարեն Համբարձումյանը («Բարձրավոլտ էլցանցեր» ՓԲԸ բաժնի պետ, ԲՀԿ անդամ, առաջադրել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը), Արթուր Սարգսյանը (Սիսիանի գործող քաղաքապետ, ՀՀԿ անդամ, առաջադրել է Հայաստանի հանրապետական կուսակցությունը), Սիրաս Ստեփանյանը (Սիսիանի անտառտնտեսության անտառապետ, անկուսակցական, ինքնաառաջադրում):

Քաջարան համայնքի ղեկավարի թեկնածու են առաջադրվել Արտեմ Սարգսյանը (Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատակից, ՀՀԿ անդամ, ինքնաառաջադրում) եւ Մանվել Փարամազյանը (Քաջարանի գործող քաղաքապետ, ՀՀԿ անդամ, առաջադրել է Հայաստանի հանրապետական կուսակցությունը):

Կապան համայնքում ավագանու անդամի թեկնածու է առաջադրվել 41 հոգի, Սիսիան համայնքում՝ 36 հոգի, Քաջարան համայնքում՝ 12 հոգի:

Կապանում ավագանու անդամի թեկնածուներից 16-ը ՀՀԿ անդամ են, 18-ը՝ անկուսակցական, 2-ը՝ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության անդամ, 2-ը՝ «Երկիր Ծիրանի» կուսակցության անդամ, 1-ը՝ ՀՅԴ անդամ, 1-ը՝ Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության անդամ:

Սիսիանում ավագանու անդամի թեկնածուներից 31—ն անկուսակցական են, 1-ը՝ ՀՅԴ անդամ, 1-ը՝ ԲՀԿ անդամ, 3-ը՝ ՀՀԿ անդամ:

Քաջարանի ավագանու անդամի թեկնածուներից 5-ն անկուսակցական են, 7-ը՝ ՀՀԿ անդամ:

Սեփ.լրատվ.

Նորամուտ Կապանի արվեստի մանկական դպրոցում

էջ 5 երրորդ մրցանակի (դասատու՝ Արթուր Գաբրիելյան): «Արտ մյուզիք» արվեստի հանրապետական ութերորդ մրցույթ-փառատոնում Սվետլանա Առաքելյանը (դասատու՝ Թամարա Հայրումյան) «Քանոն» անվանակարգում արժանացավ դափնեկրի կոչման՝ պարգեւատրվելով առաջին կարգի մրցանակով եւ մեդալով: «Ասմունք» անվանակարգում Մոնա Փարսադանյանը (դասատու՝ Արթուր Գաբրիելյան) արժանացավ դափնեկրի կոչման եւ առաջին կարգի մրցանակի ու մեդալի: Իսկ «Մենապար» անվանակարգում Անի Գաբրիելյանը (դասատու՝ Թամարա Ստեփանյան) արժանացավ դափնեկրի կոչման եւ երրորդ կարգի մրցանակի:

Բաթումիում կայացած հայ-վրացական փառատոնին հրավիրված էր եւ երաժշտական կատարումներով հանդես եկավ Սվետլանա Առաքելյանը (դասատու՝ Թամարա Հայրումյան, նվագակցող՝ Քրիստինե Աբգարյան) Գյումրիում կայացած «Վերածնունդ» միջազգային իններորդ մրցույթ-փառատոնում Սվետլանա Առաքելյանն արժանացավ երկրորդ կարգի մրցանակի, իսկ մանկական արվեստի դպրոցի տնօրեն Մարինա Նահապետյանը շնորհակալագրի՝ մրցույթ-փառատոնին աջակցելու, մասնակիցների բարձր արդյունքների համար: Նախորդ տարում կրթօջախի սաների ուժերով Հովհաննես Թումանյանի հեքիաթների մոտիվներով ներկայացում է բեմադրվել Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետթատրոնի բեմում:

Մնում է մանուկների հոգիներում բարու ու գեղեցիկի հունդեր սերմանող այս կրթօջախի մանկավարժներին եւ սաներին նոր հաջողություններ մաղթել:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 10.10.2017թ.: